

ԺիրԱՅՐ ԴԱՆԻԷԼԵԱՆ, ԱԿՆԱՐԿ ԼԻՐԱՆԱՆԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ՊԱՏ-  
ՄՈՒԹԵԱՆ, «Հայկազեան Հայագիտական Հանդէս», հտր. Գ., Պէյ-  
րուք, 1973, էջ 237-382:

Լիրանանահայ գաղութը տակաւին չիորձեց իր մշակութային իրադործումներու մէկտեղումը (հաւաքում եւ հրատարակում) կա-  
տարել: Այդ իրադործումները արձանագրուած են մամուլի, գիրքե-  
րու, յայտագիրներու, տոմսակներու, նամակներու եւ այլազան վա-  
ւերաթուղթերու ու արձանագրութեանց մէջ: Պատասխանատու հաս-  
տատութիւններուն եւ մարմիններուն մօտ հազուադէպօրէն նշմա-  
րած ենք այդ թողօնին կամ ժառանգին բժախնդիր մէկտեղումի ճի-  
ղը: Այս ընդհանուր անտարբերութեան մէջ Հայկազեան Գոլէճի Հա-  
յագիտական Գրադարանին (Հիմնուած 1958 թ.ին) կատարած դերը,  
Լիրանանի մէջ լոյս տեսած գիրքերն ու թերթերը հաւաքելու ճամ-  
բով, կը գտնենք բարձրօրէն գնահատելի:

Գոլէճի խնամակալ մարմիններուն, նախադահութեան եւ Հա-  
յագիտական Ամբիոնին ցուցաբերած հոգածութիւնն ու նիւթական  
յանձնառութիւնը Հայագիտական Գրադարանին նկատմամբ աւելի  
քան երբեք վստահութիւն կը ներշնչեն սկսուած աշխատանքին բա-  
րեյաջող ելքին: Ընթացքի մէջ եղող այս ճիւղին մէջ, կարելի չէ ան-  
տեսել բաժինը Գրադարանի պատասխանատու՝ Ժիրայր Դանիէլեա-  
նի, որուն հետեւողական եւ յարատեւ հետապնդումներուն շնորհիւ է  
նաեւ որ Հայկազեան Գոլէճի Հայագիտական Գրադարանը այսօր  
տէրն է ընդհանրապէս հայ, եւ մասնաւորապէս լիրանանահայ մա-  
մուլի ճոխ հաւաքածոյի մը՝ դասաւորուած գլխաւան հիմունքներով:

Գրադարանապետի իր աշխատանքին զուգահեռ, Ժիրայր Դա-  
նիէլեան, վերջին տարիներուն նաեւ նուիրուած է հայ մամուլի  
պատմութիւնն ու մատենագիտութիւնը ուսումնասիրելու աշխա-  
տանքին: Այս ուղղութեամբ տարուած իր պրպտումներուն արդիւն-  
քըն է «Ակնարկ Լիրանանահայ Մամուլի Պատմութեան» սերտողու-  
թիւնը:

Ժ. Դանիէլեան կ'ընդունի որ Լիբանանահայ մամուլի պատմութեամբ եւ մատենագիտութեամբ ամենէն աւելի-գրադած է մեր անձը: Կը յիշատակէ նաեւ մեր լոյս ընծայած հինգ յօդուածները եւ ուսումնասիրութիւնները (էջ 237): Ե. յօդուածը, որ լոյս տեսած է Պէյրութի «Ազդակ»ին մէջ, 1960 թ.ին, պէտք է յիշատակուի որպէս առաջին յօդուած՝ ժամանակաշրջանի կարգը պահելու համար:

Ժ. Դանիէլեանի վերոյիշեալ ուսումնասիրութիւնը ունի հիմնական երկու բաժին՝ 1.- Յարդ չլիշատակուած թերթեր, 2.- Ճշգրտման, սրբագրութիւններ եւ յաւելումներ: Եղած դիտողութիւնները մեծ մասամբ մեր ուսումնասիրութիւններուն վերաբերեալ ըլլալով, կը փորձենք պատասխանել որոշ հարցերու, եւ կատարել լուսարանութիւններ:

Ժ. Դանիէլեան առաջին բաժնին մէջ կը յիշատակէ 35 թերթեր, որոնք մատենագիտական աշխատասիրութիւններու մէջ ցարդ չեն յիշատակուած:

Հարց կու տանք.- լիբանանահայ եւ սուրիահայ մամուլի պատմութեան ուսումնասիրական աշխատանքին մէջ շուրջ քսան տարուան վաստակ ունեցող անձի մը աչքէն ինչպէ՞ս այսքան թերթեր կրնան վրիպած ըլլալ (ուրիշ հարց թէ յիշատակուած թերթերուն կէսէն աւելի աշակերտական կամ միութենական ներքին հաստարակութիւններ են, եւ արտաքին «չուկայ» չելլելով՝ կրնան անձանթ մնալ): Անսխալական մարդ չկայ, սակայն այսքան մոռացումներ աններելի են: Ժ. Դանիէլեան քաղաքավար դտնուած է՝ այս հարցումը չզննելու, սակայն մենք՝ մեր հաշտոյն կը դնենք: Փորձենք «մեղքը» քաւել:

Յիշատակուած թերթերէն ոմանք մեզի ծանօթ եղած են, սակայն անոնցմէ մաս մը անտեսած ենք, որովհետեւ իսկապէս թերթ չեն, այլ խօսքով՝ մեր հասկացողութեամբ, մամուլ չեն: Իսկ ուրիշներ չենք ցուցակադրած՝ աշակերտական քանի մը էջնոց թոթովանքներ ըլլալով:

Մեր անտեսումին արդարացման ճամբով՝ նախ դնենք հարցումը. ի՞նչ է մամուլը, կամ՝ ի՞նչ կը հասկնանք մամուլ ըսելով (1):

1. Արտաշէս Տէր Խաչատուրեանի եւ Ժիրայր Դանիէլեանի (տես՝ աստ, էջ 268-271) կողմէ հարցիմ միաժամանակ արծարծումը մտածել կու տայ քէ այլեւ ժամանակն է վերջնականօրէն սահմանելու մամուլ հասկացողութիւնը: Մինչ մերկայ գրախօսակամին տուն տուող գլխաւոր պատճառը կը հանդիսանայ մամուլ հասկացողութեան մասին գոյութիւն ունեցող շփոթը, արդէն, Հանդէսի երկու աշխատակիցներն ալ, իրարմէ անկախ, մերկայ հատորին մէջ ստորագրած իրենց գրութիւններով հասկացողութեան եզր մը պատրաստած կ'ըլլան, ինչ որ, կը յուսամք, վերջնական եզրակացողութեան մը հասնելու առաջին հաստատ քայլերը կը դառնան:

Պարբերական հրատարակութիւն (թիւ կամ սլրակ, թուական ունեցող տպագրութիւն) : Վերնազիւր (տարեգիրք, կիսամեայ, շաբաթաթերթ, օրաթերթ, եւլն.) : Բովանդակութիւն (անհատակա՞ն, թէ՛ հաւաքական արտայայտութիւն) :

Այս յատկանիշներէն ո՞րն է բնորոշիչը : Ըստ մեզի՝ էականը վերջինն է : Մամուլը պարբերական հրատարակութիւն մըն է, որ հաւաքական (մէկէ աւելի անձերու) կարծիքներուն, մտածումներուն եւ տաղնասիրուն հանդիսարանը կը դառնայ :

Այս հիման վրայ կը մերժենք որպէս մամուլ յիշատակուած «Տասնամեակ», «15-ամեակ» եւ «20-ամեակ» (Տարեգիրք) Վահան Թէքէեան վրժ.ի, «Տարեգիրք Հայկազեան Գոլէճի» (1955-1965, հաստատութեան հիմնադրութեան 10-ամեակին առիթով) (էջ 254) : Նոյնպէս «Հ. Կ. Ե. Մ. —ի օրուան նուիրուած Ալլովոյ» :

Եթէ հաստատութեան մը որոշ մէկ տարեգարձին առիթով եղած հրատարակութիւն մը մամուլի մաս պիտի նկատենք, այն տեսնինչո՞ւ չյիշատակել տարեկան տեղեկագիրները, կամ յուշագիրքերը : Այդպիսի տեղեկագիրք կամ յուշագիրք ունի Աղունիէի Բուժարանը՝ 10-ամեակին եւ 25-ամեակին առիթով լոյս տեսած : Կամ՝ «Քսան-հինգամեակ Ճեմարանի եւ Համադպրակի» : Եթէ այս հրատարակութիւնները պահելով հանդերձ իրենց բովանդակութիւնը, իրենց վերնագիրին մէջ ունենալին տարեգիրք բառը, մամուլ պիտի սեպէինք զանոնք, ըստ մեզի՝ ոչ :

Բ. լուսարանութիւն : Երբ հրատարակութիւն մը թիւ կամ սլրակ, թուական ունի, եւ սակայն խմբագիրն ու «աշխատակից»ը նոյն անձն է (այլեւ խմբագիր չկայ, այլ՝ հեղինակ), կարելի՞ է տուեալ հրատարակութիւնը մամուլ սեպել : Ըստ մեզի՝ ոչ : Այս եզրակացութենէն մղուած կը մերժենք Նաչիտ Փեհլիւանեանի «Շողարձակը» եւ Յարութիւն Սահակեանի «Ղարբարդը» (Պէյրութ, 1966 Նոյ. 24) : Մանաւանդ այս վերջինը, որովհետեւ թուական կը կրէ՝ մամուլ նկատել, ճիշդ չենք գտներ : Այրիւ 2A-ի, Մայիս 28-ի, Նոյ. 29-ի առիթով առանձին թղթիկներ, դրքոյկներ լոյս կը տեսնեն խմբագրութեամբն ու աշխատակցութեամբը նոյն անձերուն, կամ՝ նոյն հաստատութիւններուն : Եթէ այդպիսի հրատարակութիւններ մամուլ պիտի նկատենք, որովհետեւ թուական եւ թիւ կը կրեն, այդ պարագային հայ մամուլին թիւը կը կրկնապատուի :

Մեզի ծանօթ է եղիպտահայ դրող Արշամ Տատրեանի «Քանաստեղծին Ձայն»ը վերնադրով դրքոյկներու շարքը (սլրակի եւ թուականի յիշատակութիւն կրող), բայց մենք հայ մամուլի մաս չենք նրկատած դայն, որովհետեւ միմիայն Ա. Տատրեանի հոգիին եւ միտքին ցոլացումները կ'արտայայտէ :

Ժ. Դանիէլիան նոյն շփոթին մէջ է երբ «Հնչակեան Մատեա-

ներ» մամուլ կը համարէ: Սոյն շարքը (Հրատարակութիւն Ս. Դ. Հնչ. Կուսակցութեան Լիբանանի Երջանի Պրօպականտի Դիւանի) կը բաղկանայ 6 պրակէ, իւրաքանչիւրը առանձին նիւթի մը յատկացուած, եւ աշխատասիրուած առանձին անհատի մը կողմէ (Մ. Սէֆէրեան, Ա. Կիտուր, եւլն.): Նմանօրինակ հրատարակութիւն մըն է Հալէպի մէջ լոյս տեսած «Անմահ Քերթողներ» ընդհանուր խորագրով քերթողադիրքերու շարքը, որոնցմէ իւրաքանչիւրը կը բովանդակէ ծանօթ բանաստեղծի մը ստեղծագործութիւնէն նմոյշներ: Այս շարքէն մինչեւ Ը. պրակը ծանօթ է մեզի, բայց մենք զայն չենք յիշատակած սուրբահայ մամուլի մատենագիտութեան մէջ: Գոյութիւն ունի նաեւ այլ շարք մը՝ «Հայրենի Աշխարհ» խորագրով, որուն յաջորդական հինգ պրակներէն իւրաքանչիւրը ունի առանձին հեղինակ, եւ առանձին նիւթ:

Ըստ մեզի՝ հրատարակութիւն մը, որ առնչուած է երեւոյթի մը, նիւթի մը եւ կամ անհատի մը, եւ կը կրէ շարքի մը անունը, եթէ միակ անհատի մը գործն է իր ամբողջութեանը մէջ, չի կրնար մամուլ սեպուիլ:

Եթէ կը ծանրանանք այս հարցին վրայ, մեր նպատակն է յըստակացնել մամուլ եղրին սահմանումը կամ ընդգրկած սահմանները: Մեր սահմանումները վճիռի մը համազօր չեն կրնար ըլլալ անշուշտ: Սակայն մեր փորձառութեան յենելով՝ հասած ենք որոշ եզրակացութիւններու, եւ սակայն պատրաստ ենք մտիկ ընելու նաեւ այլոց կարծիքները:

Գանք այլ հարցի մը: Երբ թերթ մը տէր կը փոխէ, առանց պարբերականութեան եւ բովանդակութեան փոփոխութիւն կրելու, սխալ կը դոնենք զայն առանձին թերթ սեպել:

Պէյրութ լոյս տեսած «Առաւօտ»ին տէրն էր (եւ խմբագիրը) Հրանդ Տէվէճեան, որ զայն լոյս ընծայեց 1939-46 թթ., մինչեւ իր՝ Հայաստան ներգաղթելը: Թերթը պահ մը դադրեցաւ եւ սկսաւ վերահրատարակուիլ տէր եւ տնօրէնութեամբ Յարութիւն Ճէրէճեանի (Կուժունի): Ժ. Դանիէլեան՝ Ճէրէճեանի «Առաւօտ»ը չյիշատակուած թերթերու բաժինին մէջ կը նշէ: Մինչ մենք կը կարծենք որ ատոր մասին պէտք է խօսէր յաւելումներու եւ սրբագրումներու բաժնին մէջ:

Ժ. Դանիէլեանի գնահատութեամբ, ուրեմն, Պէյրութի «Ադրար»ը պէտք է յիշենք երկու անգամ, կամ՝ որպէս երկու անջատ թերթ. մէկը՝ Մանուկ Ասլանեանի, իսկ միւսը՝ Օննիկ Թօփուղեանի անունով: Նոյն ձեւի «տիրափոխութիւն» ունեցած են «Միլիօք» շաբաթաթերթը, «Նոր Կեանք» շաբաթաթերթը, եւլն.:

Թերթի մը մասին երբ կը խօսուի՝ կ'ախնարկուի անոր «տիրափոխութեան», եթէ նման երեւոյթ դոյութիւն ունի, սակայն նոյն

Թերթի անջատ յիշատակումներ ճիշդ չենք նկատեր :

Նոյն ձևով ճիշդ չենք գտներ Պէյրութի Համազգային ձեմարանի մէջ լոյս տեսած «Ջահակիր» պարբերաթերթին (խմբ. Արարահամ Ալիքեան եւ ուրիշներ) անջատ յիշատակումը : Նոյնն է պարագան «Յառաջ» շաբաթաթերթին (էջ 255) եւ «Վերեւը» տարեգիրքին (էջ 256) :

Բոլորովին տարբեր պարագայ մըն է «Նոր Գեղի Ազգազրական Հանդէսը», (հրատ. Համաքղեցիական Վերաշինաց Միութեան Կեդր. Գործադիր Մարմնոյ) : Այս Մարմինին կեդրոնը Մ. Նահանգներու մէջ է : Սակայն իրենց Հանդէսը տպագրած են Պէյրութի մէջ : Եթէ այսպիսի հրատարակութիւններ՝ որովհետեւ լոյս ընծայուած են Պէյրութի մէջ, լիբանանահայ մամուլի մաս պիտի կազմեն, ինչո՞ւ Դանիէլեան չէ յիշատակած Հրանդ Բալուեանի «Ձուարթնոց»ը, որ իր վերջին տարիներուն լոյս ընծայուեցաւ Պէյրութ, Ալեքսանեանի «Միբանի Գօտի»ն, եւ Լեւոն Չորմիսեանի «Կարծիք»ը, որոնք նոյնպէս տպուած են Պէյրութի մէջ :

Խմբագրութեան, թէ ոչ թերթի մը տպագրութեան վայրը պիտի ճշդէ անոր՝ մեր դաղութներէն որուն պատկանելիութիւնը : Ըստ մեզի՝ առաջինը : Որովհետեւ թերթ մը խմբագիրի մը ապրած միջավայրին արձագանդն է : Տուեալ թերթի մը աշխատակիցներուն մեծ մասը, այդ միջավայրին ծնունդն են, ուրեմն՝ աշխարհագրական դասաւորման մը պարագային, տուեալ թերթ մը պէտք է յիշատակել իր խմբագիրին կամ խմբագիրներուն ընկուցութեան, եւ ոչ թէ տպագրութեան վայրին մէջ :

Մենք յիշատակած ենք «Նոր Այնթէպ»ի պարագան, որովհետեւ տարբեր է ան : Թերթը հրատարակուած է «Ամերիկաբնակ Այնթապցիներու Միութեան» կողմէ, սակայն անոր խմբագրութիւնն ու տպագրութեան պատասխանատուութիւնը յանձնուած էր Գրիգոր Պողարեանի՝ Պէյրութ : Լիբանանահայ մամուլին մէջ պէտք է յիշատակել նաեւ «Վարագ»ը, որուն խմբագրութիւնը, շրջան մը ստանձնած էր Խոսրով Թիւթիւնճեան (Պէյրութ) :

Կայ նաեւ «Նոր Բաստիլ»ի պարագան (էջ 250) : Ժ. Դանիէլեան կը յիշատակէ՝ «Կատմոս Բերդ (Սուրիա) 1927 թ.ի Օգոստոսին» : Ի՞նչ տրամաբանութեամբ այս թերթը կը յիշատակուի լիբանանահայ մամուլի բաժինին մէջ՝ մեզի համար կը մնայ անծանօթ :

Մեզի ծանօթ է Յովակիմեան-Մանուկեան վրժ.ի «Ասպետ» շաբաթաթերթին գոյութիւնը : Անտեսած ենք զայն, որովհետեւ աշակերտական դասարանային նախափորձեր են, որոնք մեծ արժէք չեն ներկայացներ : Նոյնպէս անտեսած ենք Անթիլիասի դպրեվանքին մէջ կատարուած նման փորձ մը՝ «Հրձիգ» անունով, թէեւ 1961 թ.ին

Պէյրութի մէջ մեր կազմակերպած հայ մամուլի ցուցահանդէսին ցուցադրած էինք զայն, եւ այդ առիթով լոյս տեսած դրժոյկին մէջ յիշատակած անոր անունը (էջ 18) :

Ժ. Գանիէլեանի ուսումնասիրութեան Բ. բաժինին մասին եւս ունինք որոշ վերապահութիւններ : Սակայն մեր կատարած դիտողութիւնները, նշումներն ու վերապահութիւնները ոչինչով կը նսեմացնեն կատարուած աշխատանքը, ու մեր բաղձանքն է որ ամբողջական լոյսին բերուի լիբանանահայ մամուլի պատմութիւնն ու մատենագիտութիւնը, յօդուտ հայ մամուլի պատմութեան, եւ ի նպաստ լիբանանահայ գաղութի ամբողջական պատմութեան պատրաստութեան :

ԱՐՏԱՇԷՍ ՏԵՐ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ